


Դ. Դրամ հայկական.

Եթե վսեմական կոչումն, թագն եւ գաւազան՝ ակն յանդիման տեսողացն վկայք էին արքայական աւագութեան Լեւոնի, յայտնագոյն եւ տեսողագոյն, նաեւ լրումն ինքնիշխանութեան նորին՝ ունիմք եւ մեր վկայութիւն՝ *գճրասնն*, զոր տիրաբար եհատ այնուհետեւ եւ ընդունելի արար՝ ոչ միայն իւրոց հպատակաց, այլ եւ յոգունց օտարաց, ընդ մեծ մասն Փոքր Ասիոյ, Ասորոց երկրի, յԵգիպտոս եւ ՚ի Կիպրոս, եւ անդրագոյն եւս:– Յուցաք ՚ի տեղագրութեան Այասոյ՝ զի թէ չիցէ անհաւան՝ այլ եւ ոչ քաջ յայտնեալ կամ գտեալ դրամ՝ յանուն նախնեաց իւրոց Ռուբինեանց, որոց չափ ազատութեան ՚ի վեհագոյն իշխողէ՝ չէր քաջ հաստատեալ. իսկ Լեւոնի յետ թոթափելոյ եւ գստուերական լճութիւն Անտիոքայ իշխանութեանն, չգոյր ինչ ակնառութիւն առ հրատարակել դրամ յիւր անուն, որպէս առնէին եւ յոլովք յարեւմտեայ իշխողաց երկրին Ասորոց. ապա եւ յառաջ քան զթագաւորելն մարթ էր՝ եւ է իսկ Լեւոնի հատեալ դրամ, որոյ առհաւատչեայ է սակաւագիւտս այս պղնձի, զոր եւ ՚ի դէպ է նախափորձ իմն համարել ապագայիցն արքունականաց:



Որպէս նշմարի՝ յերկոսին դէմս դրամոյն բաժանեալ է գրուածն, **Լեւոն Ժառանգ - Որդի Ստեփանէի**. յորում նկատելի է եւ կարելոր կամ պարծանս իմն համարել նորա գլիշատակ անուան հօրն, իբրեւ քաջաճանօթի եւ արժանաւորի առն. զնոյն վերագրեալ տեսանեմք եւ ՚ի պարգեւագիրս իւր, յ'ամէ 1201 ցամն 1212. *Leo, Dei gratia Rex Armeniorum, Filius Stephani*, յաւելեալ եւ զգարմն ՚ի *Հզօր ազգէն Ռուբինեանց*, *Et de potenti genere Rupinorum*, կամ առաւել եւս, *de potenti et magnifico genere, hqor* եւ *պայծառ* կամ *մեծափառ*. ոչ զհտեմ այսոքիկ թէ այլազգ ինչ էին մակդիրքն ՚ի հայ բնագրին, որ արդ ոչ գտանի. այլ զի եւ յաջորդք Լեւոնի նոյնպէս գրէին, եւ յետ հարիւր եւ երեսուն եւս ամաց (1331) թոռն թոռին